



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 5

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2015 թվականի մայիսի 25-ից

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՅՈՒՏԵՐ	4, 60
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 62</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	9, 65
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>11, 67</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	14
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>16</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>48</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ	51
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	53
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	69

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 60
Сведения о выданных патентах.....	6, 62
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	9, 65
Сведения о выданных патентах.....	11, 67
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	14
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	16
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	48
УКАЗАТЕЛИ.....	51
СООБЩЕНИЯ.....	53
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	69

CONTENTS

INVENTIONS.....	4, 60
Information on granted patents.....	6, 62
UTILITY MODELS.....	9, 65
Information on granted patents.....	11, 67
TRADE MARKS.....	14
Information on registered trade marks and service marks	16
Information on renewal of effect of trademark registration	48
INDEXES.....	51
REPORTS.....	53
TWO-LETTER CODES.....	69

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** արտոնագրի համարը
- 13** փաստաթղթի տեսակի կոդը
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** հայտի համարը
- 22** հայտի ներկայացման թվականը
- 23** ցուցահանդեսային առաջնության թվականը
- 31** առաջին հայտի համարը
- 32** առաջին հայտի ներկայացման թվականը
- 33** երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
- 45** գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
- 51** միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54** գյուտի անվանումը
- 56** տեղեկատվության աղբյուրներ
- 57** գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
- 62** ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 72** գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 73** արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
- 74** արտոնագրային հավատարմատար
- 85** միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86** միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
- 87** միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2015.01 (11) 2926 (13) A
C01B11/00

(21) AM20140159 (22) 21.11.2014

(72) Մհեր Ստեփանյան (AM), Անահիտ Վարդապետյան (AM), Ջուլետա Դանիելյան (AM)

(73) «ԲԻՈ-ԲԻՄ» ՍՊԸ, 0046, Երևան, Մանանդյան 33, 1/1 (AM)

(54) Նատրիումի հիպոքլորիտի ջրային լուծույթի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ նատրիումի հիպոքլորիտի բարձր հակամանրէային ակտիվություն ունեցող և կայուն ջրային լուծույթի ստացման եղանակներին, որը կարող է կիրառվել բժշկության մեջ, հատկապես՝ ստոմատոլոգիայում որպես ախտահանիչ արմատախողովակների մշակման համար:

45-50%-անոց նատրիումի հիդրօքսիդի լուծույթը քլորացնում են գազային քլորով, ապա նատրիումի հիպոքլորիտի լուծույթից առանձնացնում են նատրիումի քլորիդի նստվածքը: Քլորացումը սկսում են 0°C ջերմաստիճանում, ապա շարունակում են՝ պահպանելով 5-6°C ջերմաստիճանը՝ մինչև pH-ը հասնի 11,5-12,0 արժեքի:

Պարզեցվում է եղանակը, ստացվում է բարձր ելքով և մաքրությամբ նատրիումի հիպոքլորիտի ջրային լուծույթ, որից պատրաստված նոսր լուծույթներն ունեն բարձր հակամանրէային ազդեցություն և կայուն են առնվազն երկու տարվա ընթացքում:

(51) 2015.01 (11) 2927 (13) A
C03C3/00

(21) AM20140168 (22) 04.12.2014

(72) Տաթևիկ Վասակի Գրիգորյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)

(73) Տաթևիկ Վասակի Գրիգորյան, 0064, Երևան, Րաֆֆու 93, բն. 20 (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան, 0012, Երևան, Վաղարշյան 21, բն. 26 (AM)

(54) Կիսահաղորդչային ապակի

(57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային ապակիներին, որոնք որպես անջատիչներ ունեն լայն կիրառություն էլեկտրոնային սարքավորումներում:

Կիսահաղորդչային ապակին ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ. % . V₂O₅՝ 50.75-57.80, B₂O₃՝ 5.35-7.0, P₂O₅՝ 5.80-8.45, SrO՝ 1.80-2.75, BaO՝ 5.55-6.80, SrF₂՝ 4.0-5.75, BaF₂՝ 17.25-19.25, Al₂O₃՝ 0.45-1.25:

Սինթեզվել է բարձր էլեկտրոնային հաղորդականությամբ կիսահաղորդչային ապակի, որն առանձնանում է դյուրահալությամբ, ապակեցման ցածր ջերմաստիճանով, քիմիական կայունությամբ և բյուրեղացման նկատմամբ ցածր հակվածությամբ:

(51) 2015.01 (11) 2928 (13) A
C03C3/00

(21) AM20140169 (22) 05.12.2014

(72) Գայանե Լևոնի Քոչարյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)

(73) Գայանե Լևոնի Քոչարյան, 0076, Երևան, Բակունցի 1, բն. 37 (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան, 0012, Երևան, Վաղարշյան 21, բն. 26 (AM)

(54) Օպտիկական ապակի

(57)Գյուտը վերաբերում է օպտիկական ապակիների բաղադրակազմին, որոնք կարող են կիրառվել տարբեր տիպի օպտիկական սարքերում:

Օպտիկական ապակին ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ.%. B₂O₃՝ 16.5-22.1, PbO՝ 48.3-58.5, La₂O₃՝ 12.1-18.6, LaF₃՝ 1.0-3.0, Y₂O₃՝ 4.5-10.5, YF₃՝ 0.5-2.5, LiF՝ 2.5-4.2, Al₂O₃՝ 0.5-1.5 և Sb₂O₃՝ 0.2-0.5:

Սինթեզվել է սպեկտրի կապույտ տիրույթում հարաբերական մասնակի դիսպերսիայի բարձր և դիսպերսիայի գործակցի ցածր արժեքներով օպտիկական ապակի՝ բարձր բեկման ցուցիչի արժեքներով:

(51) 2015.01 (11) 2929 (13) A
G01N33/00

(21) AM20150019 (22) 25.02.2015

(72) Ռուզան Մաքսիմի Սիմոնյան (AM), Գեղամ Մաքսիմի Սիմոնյան (AM), Մաքսիմ Արշալույսի Սիմոնյան (AM)

(73) Ռուզան Սիմոնյան, 0026, Երևան, Լազոյի 6, բն. 54 (AM)

(54) Կենսաբանորեն ակտիվ միացությունների սուպերօքսիդի համուտազային ակտիվության որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսաքիմիայի ու դեղաբանության բնագավառներին, մասնավորապես՝ կենսաբանորեն ակտիվ միացությունների սուպերօքսիդի համուտազային ակտիվության (ՍՕԴ) որոշման եղանակին և կարող է կիրառվել բուսական ծագում ունեցող ու սինթեզված հիդրոֆոր կենսաակտիվ միացությունների (դեղամիջոցների) ՍՕԴ ակտիվության որոշման համար:

Կենսաբանորեն ակտիվ նյութը լուծում են էթանոլում կամ երկմեթիլսուլֆօքսիդում: Իրականացնում են կենսաբանորեն ակտիվ նյութի ինկուբացիա՝ սուպերօքսիդ ռադիկալ արտադրող համակարգի մեջ (էթանոլում կամ երկմեթիլսուլֆօքսիդում 30%-անոց ջրածնի պերօքսիդի լուծույթ), ներկանյութի (էթանոլում կամ երկմեթիլսուլֆօքսիդում լուծված կումասի բրիլիանտ կապույտ (Coomassie Brilliant Blue) ներկանյութը) առկայությամբ: Ինկուբացիան իրականացնում են ալկալու միջավայրում՝ pH>8 արժեքում, սենյակային ջերմաստիճանում: Գնահատում են կենսաբանորեն ակտիվ նյութով ներկանյութի վերականգնման ռեակցիայի արգելակման աստիճանը, ինչը համապատասխանում է նյութի ակտիվությանը, ընդ որում գնահատումն իրականացնում են սպեկտրալուսաչափական մեթոդով՝ ալիքի երկարության 580նմ - ում օպտիկական սպեկտրի կլանման ինտենսիվության նվազմամբ: Որպես սուպերօքսիդի համուտազային ակտիվության միավոր համարում են կենսաբանորեն ակտիվ նյութի այն քանակությունը, որն արգելակում է ներկանյութի վերականգնումը 50%-ով: Որպես կենսաբանորեն ակտիվ նյութ օգտագործում են ջրում չլուծվող նյութ:

Պարզեցվում է եղանակը և կրճատվում է դրա իրականացման ժամանակը:

(51) 2015.01 (11) 2930 (13) A
G01R 27/00

(21) AM20150010 (22) 04.02.2015

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM)

(54) Ինդուկտիվության կոճի պարամետրերի չափման եղանակ

(57) Ըստ ինդուկտիվության կոճի պարամետրերի չափման եղանակի կոճի և չափողական շղթայի ընդհանուր հաղորդալարի միջև կոճին հաջորդաբար միացնում են ռեզիստոր, կոճի և փոփոխական հոսանքի սնման աղբյուրի միջև միացնում են լրացուցիչ ռեզիստոր, որի արտանցիչների միջև միացնում են փոխանջատիչի անշարժ հպակները, այդ միացումներով ստացված չափողական երկբևեռանին սնում են փոփոխական հոսանքով: Չափում են փուլային շեղման անկյունը փոխանջատիչի շարժական հպակի և կոճի ու ռեզիստորի ընդհանուր սեղմակի լարումների միջև՝ փոխանջատիչի երկու դիրքերում, ապա համապատասխան բանաձևերով որոշում են կոճի ինդուկտիվությունը և ակտիվ դիմադրությունը:

Պարզեցվում է ինդուկտիվության կոճի պարամետրերի չափման գործընթացը և բարձրացվում է չափման ճշգրտությունը, նկ. 2:

(51) 2015.01 (11) 2931 (13) A
H01D 37/00

(21) AM20140114 (22) 28.08.2014

(72) Սերգեյ Հայրապետյան (AM), Ռուֆ Ս. Կեվին (NO)

(73) Սերգեյ Սուրենի Հայրապետյան, 0008, Երևան, Չեռնիշևսկու 58, բն.1 (AM), Ռուֆ Ս. Կեվին, Լանգմիրգրենդա 21, 0861, Օսլո (NO)

(54) Ջտող միջավայրի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է քիմիական արդյունաբերությանը, մասնավորապես՝ զտող միջավայրի ստացմանը, և կարող է կիրառվել ջրերի և ջրային համակարգերի մաքրման համար:

Խառնում են դիատոմիտ և բնական այլ դիսպերս նյութեր: Խառնուրդին լրացուցիչ ավելացնում են անօրգանական ձևափոխիչով մշակված բենտոնիտ: Ընդ որում, որպես անօրգանական ձևափոխիչ, գերադասելիորեն, օգտագործում են կալցիումի հիդրօքսիդ, ծծմբական կամ ֆոսֆորական թթու:

Պարզեցվում է զտող միջավայրի ստացման եղանակը:

(51) 2015.01 (11) 2932 (13) A
H02H 5/00

(21) AM20150008 (22) 03.02.2015

(72) Ավգեն Գասպարյան (AM), Մարինկա Բաղդասարյան (AM), Նաիրա Գասպարյան (AM)
(73) «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Հոսանքահարումից պաշտպանող սարք

(57) Սարքն ունի փոփոխական ռեզիստորի տեսքով իրականացված վթարային ազդանշանի տվիչ, էլեկտրամագնիսական ռելե, գործարկող ու կատարող մեկական օրգան, հպակային երկու կոճակ՝ թեստավորման ու հետքերման, թեստավորման ռեզիստոր և լուսային ազդասարք: Գործարկող օրգանն ունի վթարային ազդանշանի ձևավորման հանգույց, տիրիստոր, ուղղիչ և ռելեի էլեկտրամագնիսական կոճ: Վթարային ազդանշանի ձևավորման հանգույցը կազմված է հաջորդաբար միացված ուղղիչից, ռեզիստորից և երկու ստաբիլիտրոնից: Էլեկտրամագնիսական ռելեն ունի նաև

կոմուտացման հպակներ: Ստաբիլիտրոններից մեկի կատողը միացված է տիրիստորի կառավարման էլեկտրոդին: Վթարային ազդանշանի ձևավորման հանգույցի ուղղիչի անողը միացված է փոփոխական ռեզիստորի շարժական սեղմակին: Ռելեի կոճը գործարկող օրգանի ուղղիչի միջոցով հաջորդաբար միացված է տիրիստորի անողին: Սնող ցանցի լարման ֆազին միացվող թեստավորման հպակային կոճակի առաջին սեղմակը միացված է ռելեի կոճին, իսկ երկրորդը՝ թեստավորման ռեզիստորին: Հպակային հետքերման կոճակի առաջին սեղմակը միացված է ռելեի հետքերման շղթային: Կատարող օրգանն ունի սիմիստոր, կոնդենսատոր և ռեզիստոր: Լուսային ազդասարքն ունի երկու ուղղիչ, ռեզիստոր և երկգույն լուսադիոդ: Կատարող օրգանի ռեզիստորը մեկ արտանցիչով ռելեի հպակի միջոցով միացված է սիմիստորի կառավարման էլեկտրոդին, իսկ մյուս արտանցիչով՝ կոնդենսատորին: Սնող ցանցի լարման ֆազին միացվող կոնդենսատորի արտանցիչը միացված է ռելեի կոճին, սիմիստորին, թեստավորման կոճակին և լուսային ազդասարքի հակադիր բևեռականությամբ երկու ուղղիչին: Լուսային ազդասարքի ռեզիստորը մեկ արտանցիչով միացված է լուսադիոդին, իսկ մյուս արտանցիչով՝ հակադիր բևեռականությամբ երկու ուղղիչին: Սնող ցանցի զրոյական ֆազին միացվող լուսադիոդի արտանցիչը միացված է հետքերման կոճակին:

Բարձրացվում են էլեկտրասարքավորումների հուսալիությունը և շահագործման անվտանգությունը, 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

**(51) 2015.01 (11) 406 (13) U
A01G13/00**

(21) AM20150004U (22) 21.01.2015

(72) Վալտեր Աթանեսյան (AM), Հովհաննես Թոքմաջյան (AM), Աշոտ Սաֆարյան (AM)

(73) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Ծառերի տնկիների պաշտպանիչ ցանկապատ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղատնտեսության բնագավառին և կարող է օգտագործվել քաղաքային, անտառային և բանջարաբոստանային տնտեսություններում:

Ծառերի տնկիների պաշտպանիչ ցանկապատն ունի թեք տեղադրված, թևերով իրար միակցված և ստորին սրածայր հատվածամաս ունեցող չորս ձողերից կազմված հիմնակմախք:

Չորս ձողերի սրածայր հատվածամասերը և թևերը փոխազուցավոր են, ձողերի վերին ծայրամասերը կորացված են, իսկ թևերի ծայրերը կոշտ ամրակցված են ձողերին: Յուրաքանչյուր ձողի միևնույն բարձրության վրա կոշտ միակցված է առնվազն երկու բարձակ: Բարձակներն ունեն դեպի վեր թեքված կողեր: Բարձակների վրա տեղադրված են հեծաններ, որոնք մեկ ծայրամասով ամրակցված են բարձակներից մեկին, իսկ մյուս ծայրամասով ազատ նստած են կից ձողերից մեկին միակցված բարձակի վրա:

Ապահովվում է նորատունկ ծառերի ուղղաձիգ աճը, պաշտպանում է հարվածներից, 2 նկ.:

**(51) 2015.01 (11) 407 (13) U
A61B 8/00
A61B 18/00**

(21) AM20150007U (22) 02.02.2015

(72) Տիգրան Սերյոժայի Անտոնյան (AM), Սերգեյ Տիգրանի Անտոնյան (AM)

(73) Տիգրան Սերյոժայի Անտոնյան, 0078, Երևան, Բաշինջաղյան 1-ին փող. 12, բն. 6 (AM), Սերգեյ Տիգրանի Անտոնյան, 0078, Երևան, Բաշինջաղյան 1-ին փող. 12, բն. 6 (AM)

(54) Մազահեռացման և մակարդման սարք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է բժշկական տեխնիկայի բնագավառին:

Սարքն ունի մուտքային սարք, շղթայի ընդհատիչ, էլեկտրոլիտային կոնդենսատոր, բարձր հաճախության գեներատոր, որը կազմված է երկբևեռ տրանզիստորից, կոնդենսատորից և ելքային տրանսֆորմատորից, որի առաջնային փաթույթը կազմված է երկու հաջորդաբար միացված հատվածամասերից: Երկբևեռ տրանզիստորի կոլեկտորը միացված է տրանսֆորմատորի առաջնային և երկրորդային փաթույթներին: Երկրորդային փաթույթին միացված են համապատասխան էլեկտրոդները: Սարքն ունի նաև դիմադրության միջոցով ընդհատիչին միացված լուսադիոդ, որի մեկ ծայրը միացված է էլեկտրոլիտային կոնդենսատորի դրական թիթեղին, մյուս ծայրը՝ երկբևեռ տրանզիստորի էմիտերին: Մուտքային սարքն իմպուլսային սնուցման աղբյուր է, որի դրական ելքին միացված են տրանսֆորմատորի առաջնային փաթույթի երկու հաջորդաբար միացված հատվածամասերի միացման կետը, ռեզիստորի միջոցով՝ երկբևեռ տրանզիստորի բազան և էլեկտրոլիտային կոնդենսատորի միջոցով՝ երկբևեռ տրանզիստորի էմիտերը, որը միացված է նաև սնուցման աղբյուրի բացասական ելքին: Տրանսֆորմատորի միջուկը ֆեռիտային է:

Ապահովվում է իջեցված լարման հստակ մեծությունը, պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ.:

**(51) 2015.01 (11) 408 (13) U
B02C 13/00**

B07B 9/00

(21) AM20140163U (22) 28.11.2014

(72) Հեկտոր Ռուբենի Բաղյան (AM), Աշոտ Հեկտորի Բաղյան (AM), Սաթենիկ Հեկտորի Բաղյան (AM)

(73) Հեկտոր Ռուբենի Բաղյան, 0028, Երևան, Կիկյան փ.2, բն.29 (AM)

(54) Կենտրոնախույս մանրատիչ և դրա հիմքով աղացման մոդուլ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է բեկուն կոշտ նյութերի՝ ապարների, շինանյութերի, ցեմենտի կլինկերի ջարդմանը և մանրատմանը, ավելի կոնկրետ՝ մանրատման և տարանջատման սարքերի համակցմանը տեխնոլոգիական մեկ մոդուլում:

Կենտրոնախույս մանրատիչն ունի ատամնավոր ներպատվածք և արտաթողման խողովակաոստեր ունեցող սնամեջ իրան, լիսեռի վրա տեղակայված ուղղաձիգ սնամեջ ռոտոր, որն ունի ատամնավոր պատվածք ունեցող շառավղային խողովակաոստեր, ընդ որում, ռոտորը հողակապված է բեռնման ծագարի հետ, իսկ լիսեռը՝ էլեկտրաշարժիչի հետ: Առաջարկության համաձայն՝ լրացուցիչ ունի պտտաթվի կարգավորիչ, գործադիր մեխանիզմ և ելքային նյութի մանրատման աստիճանի վերահսկման բլոկ, ընդ որում, պտտաթվի կարգավորիչի ելքը միացած է էլեկտրաշարժիչին, իսկ մուտքը գործադիր մեխանիզմի միջոցով միացած է ելքային նյութի մանրատման աստիճանի վերահսկման բլոկին:

Կոշտ նյութերի չոր աղացման մոդուլն ունի տեխնոլոգիական սխեմայով հաջորդաբար տեղակայված ազատ հարվածի կենտրոնախույս մանրատիչ, ելքային արտադրանքի տարանջատման սարք և կառավարման վահանակ, որը կապված է մոդուլի սարքերի հետ, ընդ որում, մանրատիչի շարժաբեր լիսեռը հողակապված է էլեկտրաշարժիչի հետ, իսկ տարանջատման սարքն ունի բեռնաթափման վաբեր: Առաջարկության համաձայն՝ կառավարման վահանակը լրացուցիչ ունի ելքային նյութի մանրատման աստիճանի վերահսկման բլոկ, որն իրականացված է ծրագրավորվող տրամաբանական կոնտրոլերի տեսքով, բեռնաթափման վաբերը հողակապով կապված են տարանջատման սարքի հատակին, ընդ որում, հողակապի դարձի առանցքն ուղղահայաց է վաբի առանցքին, յուրաքանչյուր վաբն ունի նյութի մանրատման աստիճանի

վերահսկման տվիչ, որի ելքը միացած է կոնտրոլերի համապատասխան մուտքին, իսկ կոնտրոլերի ելքը գործադիր մեխանիզմի միջոցով միացած է էլեկտրաշարժիչի պտտաթվի կարգավորիչին:

Բարձրացվում է արտադրողականությունը, 3 նկ.:

(51) 2015.01 (11) 409 (13) U
B65D77/00

(21) AM20140143U (22) 16.10.2014

(72) Աշոտ Մելիքյան (AM)

(73) Աշոտ Մելիքյան (AM)

(54) Ձողիկով ըմպելիք խմելու համար շիշ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է հարմարավետ կերպով շիշ ըմպելիք խմելու համար նախատեսված խողովակաձև սարքերին:

Ըմպելիք խմելու համար շիշ ներսում տեղադրված խողովակաձև ձողիկի վերևի և ներքևի հատվածամասերը կատարված են ուղիղ: Ձողիկը պատրաստված է առածգական նյութից, միջին հատվածամասը կատարված է պարուրած և զսպանակի տեսքով, որի գալարների արտաքին տրամագիծը սեղմված վիճակում փոքր է շիշ ներքին տրամագծից, իսկ սեղմաթողած վիճակում՝ մեծ է շիշ բկանցքի ներքին տրամագծից: Ձողիկի բարձրությունը սեղմված վիճակում չի գերազանցում շիշ բարձրությանը, իսկ սեղմաթողած վիճակում՝ մեծ է շիշ բարձրությունից: Ձողիկի ստորին ծայրը կատարված է թեք կտրվածքով:

Բարձրացվում է շիշ ըմպելիք խմելու համար ձողիկի օգտագործման հարմարավետությունը, 2 նկ.:

(74) Արեգ Պետրոսյան

(51) 2015.01 (11) 410 (13) U
E04B 1/00

(21) AM20150005U (22) 22.01.2015

(72) Վալտեր Աթանեսյան (AM)

(73) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Հավաքովի-միաձույլ հիմնականախք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել հավաքովի-միաձույլ շենքերի կառուցման համար:

Հիմնականախքն ունի միաձույլ երեսապատված արտաքին պատեր, կոշտության դիաֆրագմաներ, սյուներ, նախալարված հավաքովի տավրային պարզունակներ և միջհարկային ծածկեր: Արտաքին պատերը եռաշերտ են՝ կազմված պաշտպանիչ, ջերմամեկուսիչ և կրող շերտերից: Սյուները խաչաձև են՝ միաձույլ երկաթբետոնից: Սյուների թևերը հակադիր սյուների թևերին միակցված են պարզունակներով և երկաթբետոնի

շերտով: Ծածկերը մի ծայրամասով նստած են պարզունակների և սյուների թևերի վրա, մյուս ծայրամասով՝ ճարմանդներով, պատերի վրա: Պատերի երեսապատումն իրականացված է քարե սալերով: Պատերի կրող և պաշտպանիչ շերտերն իրար միակցված են ճկուն ապակեթելքավոր կամ կոշտ կապերով: Ծածկերը հոծ են կամ ջերմամեկուսիչ շերտով են: Բետոնի հետ երիթավոր միացքի համար ծածկերը կողերի վրա եզրագծով ունեն ուղղանկյուն սեպածև կտրվածքով ներս ընկած հատվածներ:

Ապահովվում են շինության անհրաժեշտ կոշտությունն ու կայունությունը, 4 նկ.:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կողը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20140331
(220) 10.03.2014

(111) 22939
(151) 04.05.2015
(181) 10.03.2024

(730) Արարատ Աղասու Մկրտչյան, Երևան, Ավան համայնք, Իսահակյան 1/2 շ., բն. 54, AM
(442) 08.05.2014
(540)



AMESDESIGN

(511)

դաս 42. դիզայն, գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում.

(210) 20140485
(220) 28.03.2014

(111) 22940
(151) 04.05.2015
(181) 28.03.2024

(730) «Մանչո գրուպ» ՍՊԸ, Երևան, Արին-Բերդի նրբ. 5, N 10, AM
(442) 18.04.2014
(540)

**ԱՊԻ
ԱՍԻ**

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ. բրինձ, տապիոկա, սագո, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. շաքար, մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(740) Էդուարդ Նահապետյան

(210) 20140784
(220) 29.05.2014

(111) 22941
(151) 04.05.2015
(181) 29.05.2024

(730) Մակպար Էքսփորթ Փրայվիթ Լիմիթիդ, IN
(442) 04.07.2014
(540)

RECOFUSION

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, դիետիկ հավելումներ մարդկանց և կենդանիների համար. մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Վահագն Պետրոսյան

(210) 20140930
(220) 18.06.2014

(111) 22942
(151) 04.05.2015
(181) 18.06.2024

(730) Գայանե Ալեքսանդրյան, 0001 Երևան, Հանրապետության փ., շ. 82բ, բն. 4, AM
(442) 17.07.2014
(540)



(526) «1987» թիվն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մոխրագույն, կարմիր, սպիտակ, կանաչ և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(740) Թերեզա Կանեցյան

(210) 20140954

(111) 22943

(220) 23.06.2014

(151) 04.05.2015

(181) 23.06.2024

(730) ԿՊՕ Մարքեթինգ Քամփնի Լիմիթիդ, ՇՄ

(442) 04.08.2014

(540)

ДЖИВАН

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի). ապերիտիվներ. արաքներ. բրենդի. գինիներ, խաղողի քուսպից պատրաստված գինի. վիսկի. օղի, անիսոնի օղի, բալի օղի. ջին. դիջեստիվներ (լիկյորներ եւ ալկոհոլային խմիչքներ). կոկտեյլներ. կյուրասո. անիսոնի լիկյոր, լիկյորներ. խառնված ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի հիմքով խմիչքների). մրգեր պարունակող ալկոհոլային խմիչքներ. սպիրտային խմիչքներ. թորման միջոցով ստացված խմիչքներ. մեղրի ալկոհոլային խմիչքներ. անանուխային թրմեր. դառը թրմեր. նիրա (շաքարեղեգի հիմքով ալկոհոլային խմիչք). ռոմ. սակե. տանձի սիդր, սիդրեր. բրնձի սպիրտ. սպիրտային էքստրակտներ. մրգային սպիրտային էքստրակտներ. սպիրտային էսենցիաներ:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20140973

(111) 22944

(220) 24.06.2014

(151) 04.05.2015

(181) 24.06.2024

(730) «Վիվառո գեյմ» ՍՊԸ, Երևան, Գետառի 4/17, ԱՄ

(442) 17.07.2014

(540)



(526) «Poker» և «AM» գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է շազանակագույն, կարմիր և ոսկեգույն գունային համակցությամբ:

(511)

դաս 41. առցանց սլոթ խաղեր.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում:

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20141028

(111) 22945

(220) 26.06.2014

(151) 04.05.2015

(181) 26.06.2024

(730) ԿՊՕ Մարքեթինգ Քամփնի Լիմիթիդ, ՇՄ

(442) 04.08.2014

(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սպիտակ, դարչնագույն, բաց և մուգ բեժ, բորդո, կարմիր և մոխրագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի). ապերիտիվներ. արաքներ. բրենդի. գինիներ, խաղողի

քուսպից պատրաստված գինի. վիսկի. օղի, անիսոնի օղի, բալի օղի. ջին. դիջեստիվներ (լիկյորներ եւ ալկոհոլային խմիչքներ). կոկտեյլներ. կյուրասո. անիսոնի լիկյոր, լիկյորներ. խառնված ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի հիմքով խմիչքների). մրգեր պարունակող ալկոհոլային խմիչքներ. սպիրտային խմիչքներ. թորման միջոցով ստացված խմիչքներ. մեղրի ըմպելիքներ (մեղրասպիրտ). անանուխային թրմեր. դառը թրմեր. նիրա (շաքարեղեգի հիմքով ալկոհոլային խմիչք). ռոմ. սակե. տանձի սիդր, սիդրեր. բրնձի սպիրտ. սպիրտային էքստրակտներ. մրգային սպիրտային էքստրակտներ. սպիրտային էսենցիաներ:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20141091 (111) 22946
 (220) 08.07.2014 (151) 04.05.2015
 (181) 08.07.2024

(730) «Ֆարմ-սերվիս» ՍՊԸ, 0037 Երևան, Կ. Ուլնեցու 31/3, AM
 (442) 04.08.2014
 (540)

PINO

(511)

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ:

(740) Թերեզա Կանեցյան

(210) 20141107 (111) 22947
 (220) 14.07.2014 (151) 04.05.2015
 (181) 14.07.2024

(730) «Բրենդլիդեր» ՀՁ ՍՊԸ, Երևան, Չեխովի 35, բն. 3, AM

(442) 04.08.2014
 (540)



(526) «ԲՈՆՈՒՄ» բառը և «ՄԻՇՏ ՑԱԾԻ ԳՆԵՐ», «ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ» արտահայտություններն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր և սպիտակ գույնային համակցությամբ:

(511)

դաս 35. առևտուր:

(210) 20141190 (111) 22948
 (220) 18.07.2014 (151) 04.05.2015
 (181) 18.07.2024

(730) Անաիտ Լիմիթիդ, VG
 (442) 18.09.2014
 (540)

HYDROGEN

(511)

դաս 14. զարթուցիչներ. նվերի պատյաններ ժամացույցների համար. ժամացույցների շղթաներ. ժամանակագրիչներ (ձեռքի ժամացույցներ). ժամանակաչափեր. ժամացույցներ. էլեկտրական ժամացույցներ. ստուգանմուշային ժամացույցներ (ազդանշանի առաջադրող գեներատոր). չափանմուշային ժամացույցներ. թվացույցներ ժամացույցների պատրաստման համար. ձեռքի ժամացույցների զսպանակներ. շարժականգով վայրկենաչափներ. ապարանջաններ ժամացույցների համար. ձեռքի և գրպանի ժամացույցների կորպուսներ. ժամացույցների ապակիներ. ժամացույց-ապարանջաններ:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20141191 (111) 22949
 (220) 18.07.2014 (151) 04.05.2015
 (181) 18.07.2024

(730) Անախտ Լիմիթիդ, VG
 (442) 18.09.2014
 (540)



(511)
 դաս 14. զարթուցիչներ. նվերի պատյաններ ժամացույցների համար. ժամացույցների շղթաներ. ժամանակագրիչներ (ձեռքի ժամացույցներ). ժամանակաչափեր. ժամացույցներ. էլեկտրական ժամացույցներ. ստուգանմուշային ժամացույցներ (ազդանշանի առաջադրող գեներատոր). չափանմուշային ժամացույցներ. թվացույցներ ժամացույցների պատրաստման համար. ձեռքի ժամացույցների զսպանակներ. շարժականգով վայրկենաչափներ. ապարանջաններ ժամացույցների համար. ձեռքի և գրպանի ժամացույցների կորպուսներ. ժամացույցների ապակիներ. ժամացույց-ապարանջաններ:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20141203 (111) 22950
 (220) 22.07.2014 (151) 04.05.2015
 (181) 22.07.2024

(730) Օզակի Ինթերնեյշնլ Քո., ԼԹԴ., TW
 (442) 16.12.2014
 (540)



(511)
 դաս 9. համակարգչային խաղային ծրագրեր (գրառված և (կամ) բեռնավորվող). համակարգչային ծրագրեր (գրառված և (կամ) բեռնավորվող). համակարգչային սարքավորանք և գրառված և (կամ) բեռնավորվող ծրագրային ապահովում թվային երաժշտական ֆայլերի մշակման համար. գրառված և (կամ) բեռնավորվող էլեկտրոնային խաղեր դյուրակիր էլեկտրոնային սարքերի համար. համակարգչային գրիչներ. գրիչներ անձնական թվային էլեկտրոնային սարքերի համար. էլեկտրոնային հրապարակումներ (բեռնավորվող). ֆլեշ հիշողության դատարկ քարտեր. պաշտպանիչ պատյաններ և տուփեր դյուրակիր համակարգիչների, պլանշետային անձնական համակարգիչների, շարժական (բջջային) հեռախոսների, լուսանկարչական ապարատների և շարժական մեդիա խաղարկիչների համար. տակդիրներ անձնական թվային էլեկտրոնային սարքերի համար. շարժական (բջջային) հեռախոսների բռնիչներ. դեկորատիվ մագնիսներ. կշռման սարքավորանք. ձայնի փոխանցման ապարատներ. աուդիո բարձրախոսներ. խոսափողեր, ձայնափողեր. ձայնի ուժեղարարներ. համակարգչային խաղերի ջրյստիկներ. սնուցման մալուխներ. լուսանկարչական ապարատների կալաններ. օպտիկական ոսպնյակներ. էլեկտրական սեղմակներ. բարձրացնող տրանսֆորմատորներ. մարտկոցներ. միկրոֆոններ. ականջակալներ և հեռախոսի ականջակալներ. հավելյալ արտաքին մարտկոցներ. լուսանկարչության մեջ օգտագործվող օպտիկական գոտիներ էկրանների համար. սառեցնող օդափոխիչներ համակարգիչների համար. երեխաների շարժումը հսկող ազդանշանային սարքեր՝ ոչ բժշկական նպատակների համար. նույնականացման մագնիսական քարտեր. բռնկալամպեր (լուսանկարչություն). լուսափականներ. համակարգիչների ստեղնաշարեր. սրտի զարկերը ցույց տվող մոնիտորներ սպորտի համար. ջերմաչափեր (բացառությամբ բժշկական ջերմաչափերի). քայլաչափեր. ուղեղի ալիքների տվիչներ, ոչ բժշկական նպատակների համար. պաշտպանիչ կափարիչներ

վեր տեսախցիկների համար. պայուսակներ դյուրակիր համակարգիչների համար. պատյաններ դյուրակիր համակարգիչների համար. մալուխի կապիչներ. մալուխների հավաքիչներ (կոլեկտորներ). պատյաններ ականջակալների համար. ցանցային համակենտրոնիչներ. էլեկտրական կամ օպտիկական ազդանշանների փոխանցման մալուխներ. սառեցնող տակդիրներ դյուրակիր համակարգիչների համար. համակարգիչների ստեղնաշարերի պաշտպանիչ կափարիչներ. մարմնի կազմվածքի և մկանների վիճակը վերլուծող սպորտային սարքեր՝ ոչ բժշկական նպատակների համար. ավտոմոբիլային կալիչներ շարժական (բջջային) հեռախոսների համար. սննդամթերքի ստուգման և ախտորոշման սարքեր. առևտրում և արդյունաբերության մեջ օգտագործվող գրառված և (կամ) բեռնավորվող լուսավորության կառավարման ծրագրեր:
(740) Արարատ Գալոյան

(210) 20141266 (111) 22951
(220) 07.08.2014 (151) 04.05.2015
(181) 07.08.2024

(730) Գևորգ Ղևոնդի Բաբախանյան, Երևան, Ավան, Դուրյան 34-3, AM
(442) 14.11.2014
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է դեղին և սև գունային համակցությամբ:
(511)

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճամփորդությունների կազմակերպում:

(210) 20141326 (111) 22952
(220) 23.08.2014 (151) 04.05.2015
(181) 23.08.2024

(730) «Խաչկար» ՍՊԸ, Երևան, Ֆրունզեի 6-րդ շենք, բն. 35, AM
(442) 14.11.2014
(540)



(511)
դաս 18. կաշի և կաշվի նմանակումներ, դրանցից պատրաստված իրեր:

(210) 20141421 (111) 22953
(220) 19.09.2014 (151) 04.05.2015
(181) 19.09.2024

(730) Ֆիսունգ Լիմիթիդ, GB
(442) 17.10.2014
(540)

NALCROM

(511)
դաս 5. դեղագործական միջոցներ, պատրաստուկներ և նյութեր:
(740) Անգելինա Նահապետյան

(210) 20141439 (111) 22954
(220) 23.09.2014 (151) 04.05.2015
(181) 23.09.2024

(730) Դայջեո Նորթ Ամերիկա, Ինք., Կոնեկտիկուտ նահանգի կորպորացիա, US
(442) 16.12.2014
(540)



(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):
(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20141440 (111) 22955
(220) 23.09.2014 (151) 04.05.2015
(181) 23.09.2024

(730) Դայջեո Նորթ Ամերիկա, Ինք.,
Կոնեկտիկուտ նահանգի կորպորացիա, US
(442) 16.12.2014
(540)



(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):
(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20141452 (111) 22956
(220) 29.09.2014 (151) 04.05.2015
(181) 29.09.2024

(730) «Երևանի շամպայն գինիների գործարան»
ԲԲԸ, Երևան, Թբիլիսյան խճուղի 20, AM
(442) 17.10.2014
(540)

“HATUK XATUK”

(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):
(740) Արարատ Գալոյան

(210) 20141477 (111) 22957
(220) 06.10.2014 (151) 04.05.2015
(181) 06.10.2024

(730) «Արմենիա վայն» գործարան ՍՊԸ,
Երևան, Չկալովի 43, AM
(442) 07.11.2014
(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
(591) Ապրանքային նշանը պահպանվում է սպիտակ, կապույտ, բաց մոխրագույն, կաթնագույն, ոսկեգույն և բաց կարմիր գունային համակցությամբ:
(511)
դաս 33. գինիներ, մասնավորապես՝ փրփրուն գինիներ, հայկական շամպայն:
(740) Զարուհի Մանուկյան

(210) 20141478 (111) 22958
(220) 06.10.2014 (151) 04.05.2015
(181) 06.10.2024

(730) «Արմենիա վայն» գործարան ՍՊԸ,
Երևան, Չկալովի 43, AM
(442) 07.11.2014
(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր, սպիտակ, կաթնագույն, սև և ոսկեգույն գունային համակցությամբ:

(511)

դաս 33. գինիներ, մասնավորապես՝ փրփրուն գինիներ, հայկական շամպայն:

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20141484

(111) 22959

(220) 08.10.2014

(151) 04.05.2015

(181) 08.10.2024

(730) «Մորի տաքսի» ՍՊԸ, Երևան, Նոր-Արեշ 42, սուն 73/1, AM

(442) 17.10.2014

(540)



(526) «TAXI» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է դեղին և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 39. տաքսի ծառայության ավտոմեքենաների օնլայն ամրագրման ծառայություն:

(210) 20141487

(111) 22960

(220) 09.10.2014

(151) 04.05.2015

(181) 09.10.2024

(730) «Թրավելոն» ՍՊԸ, Երևան, Պուշկինի 21/3, գրասենյակ 6, AM

(442) 17.10.2014

(540)



(511)

դաս 35. առևտուր:

(210) 20141491

(111) 22961

(220) 09.10.2014

(151) 04.05.2015

(181) 09.10.2024

(730) Սփիրիթս Ինթերնեյշնլ Բ.Վ., LU

(442) 03.12.2014

(540)



(554) Ծավալային նշան

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի). օղի. սպիրտային խմիչքներ. օղու հիմքով ըմպելիքներ և օղու հիմքով կոկտեյլներ:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20141492

(111) 22962

(220) 09.10.2014

(151) 04.05.2015

(181) 09.10.2024

(730) Սփիրիթս Ինթերնեյշնլ Բ.Վ., LU

(442) 03.12.2014

(540)

elit

(511)

դաս 33. ակոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի). օղի:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20141531

(111) 22963

(220) 16.10.2014

(151) 04.05.2015

(181) 16.10.2024

(730) Դի Այրիշ Դեյրի Բոարդ Բո-Օփերեյթիվ Լիմիթիդ, IE

(442) 16.01.2015

(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, սպիտակ, բաց և մուգ կանաչ, դեղին, կրեմագույն և ոսկեգույն գունային համակցությամբ:

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ. բրինձ, տապիոկա, սագո, ալյուր և հացահատիկային մթերքներ. հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. շաքար, մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց. խառնուրդներ հացի պատրաստման համար. բուլկիներ, հացից փայտիկներ, թարմ հաց, սխտորով հաց, խրթաբլիթի հացիկներ, դանիական հաց, լցոնած բուլկիներ, բլիթներ, նաան հաց (հնդկական բլիթներ), պիտա հաց, լավաշ, կիսաթխված բուլկիներ, լցոնած հաց, ջմաղված ալյուրից հաց:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20141536

(111) 22964

(220) 17.10.2014

(151) 04.05.2015

(181) 17.10.2024

(730) «Թեհիլ» ՍՊԸ, Երևան, Անդրանիկի 10/2, բն.18, AM

(442) 07.11.2014

(540)

**ՄԱՔՍԻՔՍ
МАКСИКС
MAXIX**

(511)

դաս 16. թուղթ, սովարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ, մասնավորապես՝ թղթե ժապավեններ, սեղանի թղթե սպիտակեղեն, սեղանի թղթե ծածկոց՝ սփռոց, սեղանի թղթե դրոցներ, տակդիրներ, սեղանի թղթե տակդիրներ, սեղանի թղթե անձեռոցիկներ, թղթե տարողություններ սերուցքի համար, թղթե կամ սովարաթղթե իրեր փաթեթավորելու համար, սովարաթղթե իրեր, մասնավորապես՝ սովարաթղթե տարաներ, սովարաթղթե կամ թղթե տուփեր, թղթե տոպրակներ, պլաստմասսայե թաղանթներ փաթեթավորման համար, տոպրակներ աղբի համար (թղթե կամ պլաստմասսայե), թղթե սրբիչներ ձեռքերի համար.

դաս 21. տնային կամ խոհանոցային կահկարասի և սպասք, սանրեր և սպունգներ. խոզանակներ (բացառությամբ նկարչական վրձինների) և դրանց պատրաստման նյութեր. իրեր մաքրման նպատակների համար. պողպատյա տաշեղ. զամբյուղներ կենցաղային օգտագործման համար. խոհանոցային շերտիներ. ջերմամեկուսիչ տարողություններ

ըմպելիքների համար. ոչ էլեկտրական զտիչներ (քամիչներ) սուրճի համար. ձեռքով կառավարվող սրճադասեր. սուրճի սպասքակազմեր (սեղանի պարագաներ). ոչ էլեկտրական սրճամաններ. կենցաղային կամ խոհանոցային տարողություններ (բացառությամբ ազնիվ մետաղներից պատրաստվածների). տուփեր թխվածքների համար. խոհանոցային սպասքի հավաքակազմեր. ոչ էլեկտրական խոհանոցային սպասք սնունդ պատրաստելու համար. սնունդը սառեցնող կենցաղային հարմարանքներ, որոնք պարունակում են ջերմափոխանակիչ հոսուն միջավայրեր. բաժակներ. թղթե կամ պլաստմասսայե բաժակներ. ափսեներ միանգամյա օգտագործման համար. բաժակներ ըմպելիքների համար. ջրոցներ (գուռեր). անոթներ խմելու համար. դրոցներ (տակդիրներ, պատվանդաններ) ձվերի համար. արձնապատ ապակի. վազաներ (սկահակներ) մրգերի համար, ոչ ազնիվ մետաղներից. ապակե գնդեր. ձեռնոցներ տնային տնտեսության համար. ջերմամեկուսիչ տարողություններ սննդամթերքի համար. սառցադուլեր (դուլեր սառույցի համար). խոհանոցային տարողություններ. կաղապարներ սառույցի համար. կաղապարներ (խոհանոցային սպասք). թղթե սկուտեղներ. աղցանամաններ. շաքարամաններ. ափսեներ. թեյը թրմելու գնդիկներ. տուփեր թեյի համար. թեյի սպասքակազմեր (սեղանի պարագաներ). թեյաքամիչներ. թրմելու թեյամաններ. սկուտեղներ բանջարեղենի համար. մետաղական անոթներ սառույցներ և սառույցով ըմպելիքներ պատրաստելու համար.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ. բրինձ, տապիոկա, սագո, այլուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն. շոկոլադային ըմպելիքներ. կակաոյով ըմպելիքներ. սուրճով ըմպելիքներ. թեյի հիմքով ըմպելիքներ. թխվածքաբլիթներ. հաց. քաղցրաբլիթներ (անուշահաց). բուլկիներ. հացաթխման փոշիներ. խմորիչներ, աղ, մանանեխ. քացախ, սոուսներ, թավալելու պաքսիմատ. ամոքահունց բուլկիներ. շոկոլադ. շոկոլադակաթնային ըմպելիքներ. կակաո. կակաոյով և կաթով ըմպելիքներ. կակաոյից պատրաստված սննդամթերք. սուրճ. սուրճով և կաթով ըմպելիքներ. սրճային բուրումնավետացնող նյութեր.

սուրճի բուսական փոխարինիչներ. սուրճի հումք. ըմպելիքների բուրումնավետարարներ (բացառությամբ եթերային յուղերի). թխվածքի բուրումնավետարարներ (բացառությամբ եթերային յուղերի). սառեցրած յոգուրտ. մեղր. պաղպաղակ. կապակցող նյութեր սննդային սառույցի համար. սառույց սառեցման համար. սառույցով թեյ. մակարոնեղեն. թխվածքաբլիթ. սննդային ձավարներ. մրգային պաղպաղակ. շաքար. մեղր, մաթ. քաղցրավենիք. բնական քաղցրացնող նյութեր. թեյ. վանիլ (բուրումնավետացնող նյութ). վանիլին (վանիլի փոխարինիչներ). կայունարարներ խփված սերուցքի համար (համեմունք):

(210) 20141551 (111) 22965
(220) 17.10.2014 (151) 04.05.2015
(181) 17.10.2024

(730) «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Վարդանանց 28/2-34, AM
 (442) 16.01.2015
 (540)



(511)
 դաս 38. հեռարձակում, ներառյալ՝ հարցազրույցների, այդ թվում՝ բացառիկ.
 դաս 41. տեղեկատվական, վերլուծական հոդվածների և նյութերի պատրաստում, հեռուստա- և ռադիոհաղորդումների պատրաստում, ոչ ֆորմալ ուսուցում.

դաս 42. գիտական հետազոտություններ, վերլուծություններ. կիրառական քաղաքակառուցությունների մշակում:

(210) 20141552 (111) 22966
(220) 17.10.2014 (151) 04.05.2015
(181) 17.10.2024

(730) «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Վարդանանց 28/2-34, AM

(442) 16.01.2015
(540)



(511)

դաս 38. հեռարձակում, ներառյալ՝ հարցազրույցների, այդ թվում՝ բացառիկ.

դաս 41. տեղեկատվական, վերլուծական հոդվածների և նյութերի պատրաստում, հեռուստա- և ռադիոհաղորդումների պատրաստում, ոչ ֆորմալ ուսուցում.

դաս 42. գիտական հետազոտություններ, վերլուծություններ. կիրառական քաղաքականությունների մշակում:

(210) 20141553
(220) 17.10.2014

(111) 22967
(151) 04.05.2015
(181) 17.10.2024

(730) «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Վարդանանց 28/2-34, AM

(442) 16.01.2015
(540)

«Հայացք»

կիրառական քաղաքականության և

հետազոտությունների վերլուծական կենտրոն

(526) «կիրառական քաղաքականության և հետազոտությունների վերլուծական կենտրոն» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(511)

դաս 38. հեռարձակում, ներառյալ՝ հարցազրույցների, այդ թվում՝ բացառիկ.

դաս 41. տեղեկատվական, վերլուծական հոդվածների և նյութերի պատրաստում, հեռուստա- և ռադիոհաղորդումների պատրաստում, ոչ ֆորմալ ուսուցում.

դաս 42. գիտական հետազոտություններ, վերլուծություններ. կիրառական քաղաքականությունների մշակում:

(210) 20141554
(220) 17.10.2014

(111) 22968
(151) 04.05.2015
(181) 17.10.2024

(730) «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Վարդանանց 28/2-34, AM

(442) 16.01.2015
(540)

"Insight"

Analytical Center for

Applied Policy and Research

(526) «Analytical Center for Applied Policy and Research» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(511)

դաս 38. հեռարձակում, ներառյալ՝ հարցազրույցների, այդ թվում՝ բացառիկ.

դաս 41. տեղեկատվական, վերլուծական հոդվածների և նյութերի պատրաստում, հեռուստա- և ռադիոհաղորդումների պատրաստում, ոչ ֆորմալ ուսուցում.

դաս 42. գիտական հետազոտություններ, վերլուծություններ. կիրառական քաղաքականությունների մշակում:

(210) 20141555
(220) 17.10.2014

(111) 22969
(151) 04.05.2015
(181) 17.10.2024

(730) «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Վարդանանց 28/2-34, AM

(442) 16.01.2015
(540)

"Взгляд"

Аналитический центр

прикладной политики и исследований

(526) «Аналитический центр прикладной политики и исследований» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(511)

դաս 38. հեռարձակում, ներառյալ՝ հարցազրույցների, այդ թվում՝ բացառիկ.

դաս 41. տեղեկատվական, վերլուծական հոդվածների և նյութերի պատրաստում, հեռուստա- և ռադիոհաղորդումների պատրաստում, ոչ ֆորմալ ուսուցում.

դաս 42. գիտական հետազոտություններ, վերլուծություններ. կիրառական քաղաքականությունների մշակում:

(210) 20141556 (111) 22970
(220) 17.10.2014 (151) 04.05.2015
(181) 17.10.2024

(730) «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Վարդանանց 28/2-34, AM
(442) 16.01.2015
(540)

«Հայացք» վերլուծական կենտրոն

(526) «վերլուծական կենտրոն» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)

դաս 38. հեռարձակում, ներառյալ՝ հարցազրույցների, այդ թվում՝ բացառիկ.

դաս 41. տեղեկատվական, վերլուծական հոդվածների և նյութերի պատրաստում, հեռուստա- և ռադիոհաղորդումների պատրաստում, ոչ ֆորմալ ուսուցում.

